Հավելված N 12

ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(հարկիրճ շարադրանք)

1. ՈԼՈՐՏԸ

2026-2028 թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտային քաղաքականության գերակա նպատակն է՝ ապահովել մատչելի, որակյալ և մրցունակ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն՝ նպաստելով բարձրագույն կրթության միջազգայնացման, շարժունության հնարավորությունների ընդլայնմանը, ունենալով աշխատաշուկայի պահանջներին համապատասխան բարձրագույն կրթությամբ մրցունակ շրջանավարտներ, որոնք կաշխատեն ըստ մասնագիտության:

2. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

Ելնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 16-ի ««Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» օրենքից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N-351-Լ որոշմամբ սահմանված թիրախներից՝ բարձրագույն մասնագիտական կրթության բնագավառում կիրականացվեն մի շարք միջոցառումներ՝ ուղղված մասնագիտական կրթության որակի բարելավմանը, եվրոպական կրթական տարածքին ինտեգրմանը, սոցիալապես խոցելի խավերի համար մասնագիտական կրթության մատչելիությանը և հասանելիությանը:

3. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2026-2028թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում «1111. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն ծրագիր» ծախսային ծրագիրի նպատակների և թիրախների ապահովման նպատակով 2025-2027 թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից իրականացվող հիմնական ծախսային ուղղություններն՝ ըստ գերակայությունների ներկայացված են ստորև.

- Բարձրագույն կրթության հասանելիության և մատչելիության ապահովում,
- Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի ամբողջական ինտեգրմանն ուղղված բարեփոխումների իրականացում,
- Բարձրագույն կրթության որակի ապահովման ծառայություններ:

4. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

2026-2028թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում շարունակվելու է իրականացնել «1111. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն ծրագիր» ծախսային ծրագիրը, որի գծով գոյություն ունեցող ծախսային պարտավորություններն ըստ տարիների կկազմեն 2026թ՝ **13,703,124.7 հազար դրամ**, 2027թ.՝ **13,585,892.5 հազար դրամ**, 2028թ.՝ **13,533,775.6 հազար դրամ**:

Վերոնշյալ ծրագրով նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

Միջո-ցառման դասիչը	**Միջոցառում**	**2026թ. բյուջե (հազ. դրամ)**	**2027թ. բյուջե (հազ. դրամ)**	**2028թ. բյուջե (հազ. դրամ)**
11001	Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ծառայություններ	43,113.5	43,113.5	43,113.5
11003	Բարձրագույն կրթության որակի ապահովման ծառայություններ	59,989.5	59,989.5	59,989.5
11007	Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի անդամակցությամբ պայմանավորված բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի բարեփոխումներ	45,010.7	45,010.7	45,010.7

12001	Բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ	1,178,108.0	1,178,108.0	1,178,108.0
12002	Հետբուհական մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ բուհական հաստատություններում	488,448.0	488,448.0	488,448.0
12003	Ասպիրանտական կրթաթոշակներ գիտական հաստատություններում սովորողներին	89,040.0	89,040.0	89,040.0
12004	Բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում	10,413,630.9	10,413,630.9	10,413,630.9
12005	Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրում բուհական հաստատություններում	373,811.4	373,811.4	373,811.4
12006	Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրում գիտակրթական հաստատություններում	35,586.2	35,586.2	35,586.2
12008	Ուսումնական վարկերի տոկոսավճարների մասնակի փոխհատուցում	66,300.0	66,300.0	67,300.0
12011	2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և ՀՀ-ում բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողներին ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման նպատակով կրթաթոշակի տրամադրում	440,237.5	440,237.5	440,237.5
12012	Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների ՀՀ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում սովորող ուսանողների ուսման վարձի փոխհատուցում	469,849.0	352,616.8	299,499.9